

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՉՔՆԱՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
**2017 -2021ԹԹ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**

Հաստատված է

Չքնաղ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 19 -ի N 8
որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

B. Salsany

Վ.Վ. Դավթյան

(անունը, ազգանունը, հայրանունը)



ՉՔՆԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Ժողովրդագրություն
3. Տեղական ինքնակառավարման մարմիններ
4. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը
5. Համայնքի ուժեղ կողմերը
6. Համայնքի թույլ կողմերը
7. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
8. Հայամքի հեռանկարային նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում
9. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական ցուցանիշները
10. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:

ԾՐԱԳԻՐ 1

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԾՐԱԳԻՐ 2

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 3

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ 4

ԾԱՌԱՏՈՒՆԿ

ԾՐԱԳԻՐ 5

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՍԿՍՈՒՄ և ԱՎԱՐՏՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 6

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՑԱՆԿԱՊԱՏԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ:

ԻՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ընդհանուր ժողովում, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնում ինչպես նաև քնարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում գործողության մեջ:

Հնգամյա ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ -տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսատնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականության համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը բյուջետային գործնթացի նպատակային իրականացումը:

Չքնաղ համայնքում հաջողությամբ իրականացվեցին նախորդ բոլոր եռամյա և քառամյա ծրագրերը, որոնց շրջանակներում լուծվեցին համայնքի առջև ծառայած բազմաթիվ խնդիրներ:

1997թ իրականացվեց խմելու ջրի արտաքին ցանցի և ՕԿՁ-ի վերանորոգման աշխատանքները, 2000թ <<Փրկենք երեխաններին >> Ամերիկյան միջազգային կազմակերպության, <<Շեն>> միության և համայնքի ներդրումով գործարկվեց համայնքի հիմնական դպրոցի երկհարկանի շենքը, 2004թ հունիսի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Չքնաղ համայնքի <<Սուրբ Ստեփանոս>> եկեղեցին և նույն օրը համայնքի բնակիչների կացարաններում վառվեցին բնական գազի օջախները, իսկ մինչև տարեվերջ համայնքը ամբողջությամբ գազաֆիկացվեց:

2007թ վերանորոգվեց համայնքի խմելու ջրի ներքին ցանցը: 2010թ հուլիսի 4-ին ՀՀ նախկին վարչապետ Տ. Սարգսյանի մասնակցությամբ բացվեց համայնքի կենտրոնի շենքը, որը իր մեջ ներառում է համայնքապետարանը, մշակույթի տունը, բուժ կետը, ընթերցասրահը, սպորտային երկու դահլիճները:

2011թ առֆալտապատվեց Ապարան-Չքնաղ միջլամայնքային ճանապարհը և համայնքի ներսում շուրջ 1 կմ երկարությամբ համայնքի կենտրոնական ճանապարհը:

2011թ ավարտվեց հիմնական դպրոցի շենքի վերանորոգման առաջին փուլը

2012թ օգաստոսին համայնքի մշակույթի տան բակում կանգնեցվեց նախկին համագյուղացի, համայնքի մեծ բարերար Գառնիկ Հովսեփյանի բրոնզաձույլ կիսանդրին:

1 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՊԱՏՄԱՆԱԿ ԱՎՆԱՐԿ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ.

ՉՔՆԱՂ

ՄԱԿԵՐԵՍԸ՝ 13.055 ԿՄ

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ 265 ՄԱՐԴ

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից դեպի արևելք 8կմ, մարզկենտրոնից 43 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Սամանդեովիչ անվանումը: Չքնաղ է վերանվանվել 1939թ: Գյուղը գտնվում է Ծաղկունյաց լեռների հյուսիս-արևելյան ստորոտում՝ Քասաղ գետի հովտում: Սահմանակից է արևելքից՝ ԹԹուջուր, արևմուտքից՝ Վարդենիս համայնքներին: Գտնվում է ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա:

Գյուղի ներկայիս բնակչության նախնիները գաղթել են 1829թ Խոյից՝ 23 և Բայազետից՝ 4 ընտանիք ընդամենը 177 մարդ, որից 95 տղամարդ և 82 կին: 1897թ գյուղն ունեցել է 527, 1926թ՝ 527, 1939թ՝ 515, 1959թ՝ 242, 1970թ՝ 235, 1979թ՝ 216, 1989թ՝ 217 այժմ 265 բնակիչ:

Գյուղում բնակչության հիմնական զբաղմունքը դաշտավարությունն ու անասնապահությունն է, որն էլ ապահովում է բկանչության եկամտի շուրջ 90% -ը: 346 հա հողատարածության վրա մշակվում են կարտոֆիլ, ցորեն, գարի, վարսակ, հաճար և կերային կուլտուրաներ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքը անջրտի պայմաններում հեկտարից կազմում է 30-40ց:

Գյուղում լուծված են ենթակառուցվածքների հետ կապված բոլոր խնդիրները: Ասֆալտապատված և բարեկարգված է Ապարանից գյուղ տանող և գյուղի կենտրոնական ճանապարհը, գյուղը ամբողջովին գազաֆիկացվել է, գյուղում գործում բջջային և իներնետ կապը:

Չքնաղի կրթական, հոգևոր և մշակույթային զարգացման գործոքը իր անուրանալի ավանդն ունի Հովսեփյան գերդաստանը: Գառնկ և Անժելա Հովսեփյանների բարե-

գործությամբ կառուցվեց և 2004թ. հունիսի 20-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ձեռամբ օծվեց Չքնաղի « Սուրբ Ստեփանոս » կենտրոնագմբեթ եկեղեցին: Եկեղեցու կառուցման գործում ներդրած մեծ ավանդի համար Գառնիկ և Անժելա Հովսեփյաններին շնորհվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու բարձրագույն « Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան:

Նորակառույց « Սուրբ Ստեփանոս» եկեղեցին կառուցվեց 1926թ. երկրաշարժի ժամանակ խոնարհված « Սուրբ Ստեփանոս» բազիլիկ տիպի միանավ եկեղեցու հարևանությամբ: Բազիլիկ եկեղեցու հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ այն կառուցվել է IV դարում: Այդ էին վկայում նաև պեղումների ժամանակ հայտնաբերված որդան կարմիրով ներկված խաչքարերը, եկեղեցու սուրբ սեղանը և բազմաթիվ այլ նմուշներ:

Գառնիկ Հովսեփյանի հովանավորությամբ 2007թ. սկսվեց և 2010թ հուլիսի 4-ին ավարտվեց Չքնաղի մշակույթի տան շինարարությունը, որտեղ գտնվում են նաև Չքնաղի գյուղապետարանը, բուժկետը, ընթերցասրահը և սպորտային ու մարմնամարզական դահլիճները: Ի նշան երախտիքի 2010թ. հուլիսի 4-ին Չքնաղ համայնքի ավագանու որոշմամբ Չքնաղի մշակույթի տունը անվանակոչվեց Մեծ բարերար, « Չքնաղ համայնքի պատվավոր քաղաքացի» Գառնիկ Հովսեփյանի անունով, իսկ 2013թ. դարձյալ Չքնաղ համայնքի ավագանու որոշումով մշակույթի տան բակում կանգնեցվեց Գառնիկ Հովսեփյանի բրոնզաձույլ կիսանդրին:

2011թ. Գառնիկ Հովսեփյանի ներդրումով վերանորոգվեց նաև Չքնաղի հիմնական դպրոցի շենքը:

Չքնաղ համայնքի կրթական, հոգևոր և մշակութային զարգացմանը ներդրած ավանդի համար Գառնիկ Հովսեփյանը 2012թ. արժանացավ « Եվրոպական միության» և «Եվրոպա Նոստրա» -ի մշակութային ժառանգության մրցանակաին, որն աշխարհում շնորհվում է տարին մեկ անգամ և մեկ մարդու՝ մրցութային կարգով:

2010թ. հուլիսի 4-ին Չքնաղի մշակույթի տան բացմանը մասնակցեց և ելույթ ունեցավ այդ ժամանակ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Այդ օրը Չքնաղ համայնքի ավագանու որոշմամբ «Չքնաղ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչման արժանացան նաև Հայաստանի սոց. ներդրումների հիմնադրամի տնօրեն Աշոտ Կիրակոսյանը, «Սպիտակ տնակ» շինարարական կազմակերպության ղեկավար Արագած Ախոյանը, շինարար Կարեն Աղայանը: Տարբեր ժամանակներում «Չքնաղ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչման են արժանացել նաև ճարտարապետ Արմեն Աբրոյանը, Հրաչիկ Գառնիկի Հովսեփյանը և ՀՀ գյուղատնտեսության նախկին նախարար Դավիթ Արսենի Լոքյանը:

Չքնաղ համայնքում է գտնվում նաև Հովսեփյան գերդաստանի նախնիների կողմից կառուցված «Սուրբ Նարեկը», որը հիմնովին վերանորոգվեց և օծվեց 2004թ. նոյեմբերի 15-ին:

2004թ. Հովսեփյան գերդաստանի անմիջական մասնակցությամբ գյուղում կառուցվեց նաև բոլոր ժամանակների հերոսամարտերում զոհված չքնաղցիների հիշատակին նվիրված աղբյուր – հուշարձանը:

Չքնաղցիները իրենց մասնակցությունն են բերել Բաշ – Ապարանի հերոսամարտին, որի ժամանակ չքնաղցիներից կլազմավորված կամավորական ջոկատը ցոցաբերած հերոսության համար պարգևատրվեց Բաշ- Ապարանի ճակատամարտի հրամանատար Մեղրակ Ջալալյանի անձնական ձեռքի ժամացույցով:

Հայրենական Մեծ պատերազմին այս փոքրիկ գյուղից 120 մարդ է մասնակցել, որից 82 – ը չի վերադարձել: Չքնաղցիներն իրենց մասնակցությունն են բերել նաև Արցախի ազատագրական պայքարին:

Համայնքում մի քանի սերունդ իր ավանդն է դրել գյուղի զարգացման ու բարգավաճման համար: Նրանց շնորհիվ է նաև, որ ներկայումս բնակավայրը, իրոք, համա-

պատասխանում է իր անվանը:

Նրանք են՝ դաշտավարական բրիգադի բրիգադավար, Հայրենական Մեծ պատերազմի մասնակից, ԽՍՀՄ 22-րդ համագումարի պաղգամավոր, Սոցիալիստական աշխատանքի հերոս Մեսրոպ Մովսեսի Ղարիբյանը, միջազգային կարգի սպորտի վարպետ, Եվրոպայի 1979թ. չեմպիոն, բոնցքամարտիկ Ալբերտ Վոլոդյայի Նիկոլյանը, լրագրող, հրապարակախոս, կինոսցենարիստ Վլադիմիր Բալաբեկի Մուրադյանը, Հերոսուհի մայրեր՝ Աստղիկ Հարությունյանը (12 երեխա), Մարան Դավթյանը (10 երեխա), Մարգարիտ Կոստանյանը (10 երեխա), « Պատվո նշան » շքանշանի ասպետներ, հովիվներ՝ Մաթևոս Հայրապետի Դավթյանը և Հրաչ Հայկազի Ավագյանը, գուսան Հալաջյանը (Գալուստ Հալաջի Հալաջյան - Ավետիսյան), ճարտարապետ Գասպար Գրիգորի Տոնոյանը, Ֆիզիկոս «Նաիրիտ » գիտա-արտադրական միավորման լաբորատորիայի գիտական մասի ղեկավար Վահան Ջանիբեկի Տոնոյանը, քիմիկ - ինժեներ Մացակ Մարտիրոսյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Լևոն Մեղրակի Ղազարյանը, տեխնիկական գիտությունների թեկնածուներ՝ Հովհաննես Բալաբեկի Մուրադյանը և Վահրամ Հովհաննեսի Մուրադյանը, հասարակական գիտությունների թեկնածու Լուսինե Վլադիմիրի Մուրադյանը, երգչուհի և դերասան, կինոռեժիսոր Արմեն Էգոյանի « Արարատ » ֆիլմի մոր դերակատար Անահիտ Մուրադի Մնացականյան – Կուտսուզյանը, նկարիչ- ձևավորող Հայաստանի դիզայներների միության անդամ (2000թ), դիզայներների միջազգային միության անդամ (2002թ.) Ազատուհի (Տաթևիկ) Մուրադի Մնացականյանը, հագուստի ձևավորող, Հայաստանի դիզայներների միության անդամ (1995թ.), դիզայներների միջազգային միության անդամ (1996թ.) Հասմիկ Մուրադի Մնացականյանը, ՀԼԿԵՄ Ապարանի շրջկոմի առաջին քարտուղար (1987-1989թթ.) Վանյա Վազգենի Դավթյանը, Լրագրող, բանաստեղծ, խմբագիր, « Միասնության շուրջպարի» և « Ապարան »

երգերի բառերի հեղինակ Սերգեյ Գեիմի Հարությունյանը, ԱԺ պատգամավոր (2012թ-ից) Ռուբեն Գառնիկի Հովսեփյանը, ՀՀ Պետական գործիչ, ՀՀ Արդարադատության պետական խորհրդական (Բանակի գեներալ 1998թ), իրավաբանական գիտությունների թեկնածու (1999թ), դոկտոր(2005թ) , Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային արակեմիայի ակադեմիկոս (2004թ), ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1990-1995թթ.), ՀՀ վասկավոր իրավաբան (01.07.2003թ), ՀՀ Գլխավոր դատախազ (1998-1999թթ և 2004-2013թթ.), <<ՆԻԳ- ԱՊԱՐԱՆ>> հայրենակցական բարեգործական հասարակ կազմակերպության պատվավոր նախագահ (09.11.2002թ), բազմաթիվ ծրագրերի հեղինակ և կազմակերպիչ (<Միասնության շուրջպար>, <Միասնության ծառատունկ >, <Տառ-քարերի> պուրակի հիմնում, <Սուրբ խաչի >և <Հույսի խորանի> կառուցում և այլն), 2014թ-ից ՀՀ Քննչական կոմիտեի նախագահ Աղվան Գառնիկի Հովսեփյանը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1305,46 հա, որից 1246.22 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 35.35 հա բնակելի կառուցապատման հողերը, 334.2 հա վարելահողերը, 821.2 հա արոտները: Համայնքի մի մասը գտնվում է հարթության վրա իրակ միյուս մասը խիստ արտահայտված ռելիեֆ ունի: Կլիման բարեխառն է, զով ամառներով ու ցուրտ ձմեռներով: Տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 400-600մմ: Ձյունածածկ օրերի թիվը կազմում է 140-150 օր, օդի տարեկան միջին ջերմաստիճանը +4:

2.ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Չքնաղ Համայնի բնակչությունը կազմում է 165 մարդ , մշտապես առկա է 230-ը,որից 110 տղամարդ և 120 կին:Ժամանակավոր բացակա են 35 մարդ,որից 17 տղամարդ, 18 կին:Բարձրագույն կրթություն ունեն 16-ը, միջնակարգ մասնաիտական ` 9-ը: Թոշակառուներ են 46 մարդ, որից հաշմանդամության` 14-ը, նպաստառու է 2 ընտանիք: Զոհվածի ընտանիք չկա: Աշխատունակ են առկա բնակչության թվաքանակից 152 մարդ, որից 132-ը գյուղատնտեսությունում, 20-ը այլ կազմակերպություններում: Ծխերի թիվը կազմում է 47 ընտանիք: Չքնաղի հիմնական դպրոցում սովորում են 30 աշակերտներ, որոնցից 21 տղա և 9 աղջիկ: Համայնքում ծնվում են տարեկան 3-5 երեխա: Համայնքում փախստականներ և արտախաղթածներ չկան: 1990թ-ի հետ համեմատած բնակչության թվաքանակը ավելացել է 48 շնչով:

3.ՀԱՄԱՅՆԻՔ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չքնաղ համայնքի գերակա խնդիրն է` համայնքում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն Չքնաղ համայնքի ներդաշնակ զարգացմանը:Անցած տարիներին համայնքում լուծում են ստացել մի շարք գերակա խնդիրներ, որոնք նպաստել են ինչպես բնակչության կենցաղային այնպես էլ կուլտուր- լուսավորական բնագավառների բարելավմանը, որն էլ նպաստել է բնակչության թվաքանակի ավելացմանը:Այսօր համայնքում գերակա խնդիրներ են համարվում`

1. Բնակչության մշտական աշխատանքով ապայահովումը,
2. Ներհամայնքային ճանապարհների մի մասի բարկարգումը,
3. Երկարգործության և անասնապահության զարգացումը
4. Համայնքի ճանապարհների գիշերային լուսավորությունը
5. Աղբահանությունը
6. Կանաչ գոտիների ստեղծումը (ծառատունկի միջոցառում)
7. Հիմնական դպրոցի շենքի վերանորգման 2-րդ փուլի սկսումը և ավարտումը
8. Բնակչության ցածր տոկոսադրույքներով երկարատեվ վարկերի տրամադրումը:

Ա. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2016թ Սեպտեմբերի 18-ին Չքնաղ համայնքի ղեկավար է վերնըրվել Վանյա Վազգենի Դավթյանը, որը համայնքը Ղեկավարում է 1994 թ փետրվարի 4-ից: Իր աշխատած տարիների ընթացքում մշտապես նրա ուշադրության կենտրոնում է եղել հայանքի զարգացման գերակա խնդիրները, ու չնայած համայնքի բյուջեի սուղ հնարավորությանն էն նա կարողացել է տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ և պետական միջոցներով հայանքը դարձնել հանրապետության բարկարգ ու բարեկեցիկ համայնքներից մեկը: Այսօր համայնքում մշատապես գործում է նորակառույց մշակույթի տունը, ընթերցասրահը, սպորտային դահլիճները, հայ առաքելական եկեղեցին, շորջօրյա ջրամատակարարումը և այլն: Համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից, իսկ համայնքի ղեկավարի աշխատակազմում աշխատում են 2 համայնքային ծառայողներ: Համայնքի բնակ տարածությունը կազմում է 19800 քմ: Բնակիչների մեծ մասը վերանորոգել են իրենց բնակարանները, բարելավել են կենցաղային պայմանները: Շուրջ 15 երիտասարդ ընտանիքներ ունեն բնակարանի կարիք: Համայնքում տարեկան պահվում է 500-600 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, որոնցից ստացվող մթերքը իրացվում է հանրապետության ներսում: Համայնքը հիմնականում ապահովված է գյուղատնտեսական տեխնիկայով և գործիքներով, որն էլ հնարավորություն է տալիս ագրոտեխնիկական սեղմ ժամկետներում կատարել գյուղատնտեսական աշխատանքները:

Բ. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԻՉԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը հետևյալն է՝

1. Համայնքի կենտրոն՝ կառուցված 2010թ, գերազանց վիճակ
2. Խմելու ջրագծի արտաքին ցանց՝ 3,5 կմ
3. Խմելու ջրագծի ներքին ցանց՝ 3,8 կմ
4. Օրվա կարգավորիչ ջրամբար՝ 250 մ³
5. ԽՈՄՅ-6Մ տրակտոր՝ բավարար վիճակում
6. Ներհամայնքային ճանապարհներ, որից 1կմ ասֆալտապատ, 3,5 կմ հողային, նորմալ վիճակում

Գ. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Գյուղատնտեսության վարման կուլտուրան
2. Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը
3. Հեռախոսաֆիկացու
4. Բազմաֆիկացումը
5. Նոր դպրոցի շենքի առկայությունը
6. Հոգևոր դաստիարակության բարձր կուլտուրան
7. Մշակույթի տնով և բուժկետով ապահովվածությունը
8. Խմելու ջրով ապահովվածությունը
9. Կենցաղային պայմանների բավարար լինելը
10. Միջհամայնքային ասֆալտապատ ճանապարհի առկայությունը

Դ. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

1. Ոռոգման բացակայությունը
2. Կոյուղու և հեղեղատների բացակայությունը

3. Բնակչության մշտական աշխատանքով ապահովվածությունը
4. Անասնապահական և գյուղատնտեսական այլ մթերքների իրացումը
5. Համայնքի ճանապարհների լուսավորումը
6. Դպրոցի շենքի վերանորոգման 2-րդ փուլի ավարտը
7. Աղբահանությունը
8. Օռոտատունկի միջոցով կանաչ գոտիների ապահովումը
9. Բնական աղետները և դրանց դիմակայումը
10. Բնակչությանը ցածր տոկոսադրույթներով երկարաժամկետ վարկերի ապահովումը

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՅՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

1. Ինքնուրույն զարգանալու հնարավորությունը
2. Բնական աղետները (երաշտ, կարկտահարություն, սելաֆներ և այլն)
3. Գյուղատնտեսության ապահովագրությունը

7. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ռազմավարական խնդիրների ու հիմնական նպատակների իրականացումը պետք է նպաստի բնաչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, գյուղը բարեկարգ, մաքուր ու գրավիչ դարձնելը, սյնալիսի պայմանների ստեղծումը, որը կխրախուսի բնակիչներին զբաղվել գյուղատնտեսությամբ:

Առաջիկա չորս տարիների նպատակներն են՝

1. Ոռոգման ցանցի կառուցումը
2. Ճանապարհների բարեկարգումը
3. Ճանապարհների լուսավորումը
4. Աղբահանության կազմակերպումը
5. Համայնքի շրջակա միջավայրի պահպանության և կանաչ գոտիների ստեղծում
6. Գյուղացիական տնտեսություններին գյուղատնտեսական գիտելիքների ձեռքբերման նպատակով մասնագիտական ուսուցման կազմակերպում:

Ք. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆԱԳԻԹ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

Գյուղատնտեսության և անասնապահության զարգացման ծրագիր
Խնդիր 1. ՀՀ կառավարության կողմից համայնքներին տրամադրվող բարձր
որակի սերմացուների ներկրում համայնք և գյուղատնտեսական
տնտեսություններին տրամադրում, որը կնպաստի բարձր բերքի ապահովում:
Ծրագրի ամբողջ ընթացքում:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար
Խնդիր 2. Համայնքի բնակիչների ցանկության դեպքում համայնք ներկրել բարձր
մթերացու կովեր և երինջներ, կատարելով հոտի բարելավում: Ծրագրի
ամբողջ ընթացքում

Պատ.՝ համայնքի ղեկավար
Խնդիր 3. Մթերող կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր
անասնապահական մթերքների մթերման կազմակերպման համար:
Ծրագրի ամբողջ ընթացքում

Պատ.՝ համայնքի ղեկավար
Խնդիր 4.ԳԱՄԿ-ի մասնագետների ուժերով կազմակերպել գյուղացիական
տնտեսությունների մասնագիտական ուսուցում:
Ծրագրի ամբողջ ընթացքում

Պատ.՝ համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ 2

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

Ինդիք 1. Մարգպետարանի միջոցով լուծել ֆինանսավորման խնդիրը. կազմել համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և ձեռնամուխ լինել աշխատանքների իրականացմանը: Ընդհանուր առմամբ համայնքի ամբողջ լուսավորման համար անհրաժեշտ է 2,5-3 մլն. դրամ գումար: Աշխատանքների իրականացումը նախատեսել 2016թ գարնանը:

Պատ. համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ 3

Աղբահանություն

Նպատակը՝ համայնքի տարածքը պահել սանիտարահիգիենիկ նորմերի շրջանում. Խնդիր 1. Համայնքի տարածքում շաբաթը մեկ անգամ կազմակերպել աղբահանություն և աղբը տեղափոխել դրա համար նախատեսված վայրը:

Պատ. համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ

4

Ծառատունկ

Նպատակը՝ համայնքում կանաչ գոտիների ստեղծում .
Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր տարվա գարնանը և աշնանը համայնքում կազմակերպել ծառատունկի աշխատանքներ , աշխատանքներում ներգրավելով համայնքի բնակչությանը:

Պատ. համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ 5

Հիմնական դպրոցի շենքի վերանորոգման 2-րդ փուլի ավարտը

Նպատակը՝ ավարտել դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքները
Խնդիր 1. Սոց. ներդրումների հիմնադրամի միջոցներով և համայնքի ներդրմամբ
ավարտել դպրոցի շենքի վերանորոգումը:

Պատ.՝ համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ 6

Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում

Նպատակը՝ ապահովել բնակչության նորմալ տեղաշարժի հնարավորությունը
Խնդիր 1. Համայնքի միջոցների հաշվին յուրաքանչյուր տարի կատարել
ներհամայնքային ճանապարհների փոսալցման, հարթեցման աշխատանքներ:

Պատ.՝ համայնքի ղեկավար

Ը. ՉՔՆԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ

ԾՐԱԳԻՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հ/հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավոր	2017	2018	2019	2020	2021
	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի վարչական տարածք	հա	1305.46				
2	Սեփականաշնորհված հողեր	հա	337.58				
	Որից՝ վարելահող	հա	284.80				
	խոտհարք	հա	52.78				
	Տեսաներձ հողեր	հա	35.35				
3	Պահուստային հողեր	հա	30.0				
	Որից՝ վարելահող	հա	30.0				
	խոտհարք	հա	--				
4	Արոտ	հա	821.02				
5	Այգի	հա	--				
6	Ընտանիքի թիվը	ընտանիք	47				
7	Բնակչության թիվը	մարդ	265				
8	Ծուռն	երեխա	2				
9	Մահացություն	մարդ	--				
10	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	4.5				
11	Միջհամայնքային ճանապարհներ	կմ	5.0				
12	Զբարեկարգված ճանապարհներ	կմ	3.5				
13	Բնակարանի կարիքավոր	ընտանիք	15				
14	Ուսուցիչների թիվը	մարդ	10				
15	Աշակերտների թիվը	աշակերտ	30				

Թ. ՉՔՆԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավոր	2017	2018	2019	2020	2021
	2	3	4	5	6	7	8
	Ընդամենը		6550.0				
	Հողի հարկ		1600.0				
	Գույքահարկ		450.0				
	Հողի վարձավճար		1000.0				
	Տուրքեր և վճարներ		-				
	Դոտացիա		3500.0				